Եւ քանի որ «պարտականութիւն» ասած բանը այդքան ճակատագրական նշանակութիւն ունի հայ ժողովրդի համար, ուստի նա չտապում է բացատրել, թէ ո՛րն է այդ պարտականութիւնը:

Նա պահանջում է.—

1. Դէպտապետներից կամ ժողովրդի առաջնորդներից. «Հրամայեցէ՛ք բոլոր Հայաստանում ծնուածներին, արական թէ իգական, կարդալ-գրել եւ հայերէն խօսիլ սովորեն».

2. Հայրերից. «Ձեր որդիներին անխափան հայերէն կարդալ սովորեցրէք, կրթեցէ՛ք զէնքի ու զինուորութեան արհեստի մէջ եւ օրէնքներին հնազանդել սովորեցրէք»:

3. Մայրերից. «Հաւանեցրէ՛ք ձեր եւ ձեր դուստրների սրտերը՝ ամուսնանալու քաջ արդամարդկանց եւ յաղթող զինուորների հետ. ամօթահար արէք ձեր մարդկանց, եթէ օտար ազգերի մօտ ծառայութեան մտնեն նրանք» (129):

Այս պարտականութիւնների կատարումը — հեղինակի կարծիքով — ոչ այլ ինչ է, եթէ ոչ ինքը, հայ ժողովրդի փրկութիւնն ու երջանկութիւնը: Ահա թէ ինչո՛ւ այնպէս ոգեւորուած բացականչում է նա. «Եթէ այսքան օգնութիւն լինի ձեր կողմից, բաւական է, որ հայ ազգը փայլի երջանկութեամբ: Այն ժամանակ ցնծութիւն կը տիրի հայոց մէջ, տեսնելով ոսկերերան ճարտասաններ, քաջագանդուր հերոսներ եւ դերապատուեցեալ տիրուհիներ: Մէկը անաչառ դատաւորութեամբ կը փայլի, միւսը՝ անյաղթելի զօրաւորութեամբ, երրորդը՝ ուշիմութեամբ, չորրորդը՝ հնարագիտութեամբ: Կը ծագի առաքինութեան արեւը Հայաստան աշխարհի վրայ եւ օրհնեալ կը լինի այդ ժամանակը» (130):

Սակայն իր փրկութեան համար մէկ միջոց եւս ունի հայ ժողովուրդը, դարձեալ թեթեւ ու հեշտ միջոց: Մի փոքրիկ զոհաբերութիւն դրամով: Դա էլ մի դժուար բան չի, որովհետեւ օտար տէրերին տուած հարկի մի չնչին մասն է միայն պահանջում:

Այդ հարցի լուծումը «գործնական հողի» վրայ դնելու համար՝ նա օգտւում է իր մէկ վիճակագրութիւնից — ի հարկէ, ենթադրական — որ տպուած է «Յորդորակ»ի մէջ:

Ըստ այդ վիճակագրութեան՝ Հայաստանը բաժանւում է 20 նահանգի, որոնց մէջ կայ 258 գաւառ եւ 103 քաղաք: Նրանց վեր ածելով գիւղերի, ամբողջ Հայաստանում հաշւում է 77,400 գիւղ: Իւրաքանչիւր գիւղը 60 տնից եւ տունն էլ 6 հոգից հաշուելով, Հայաստանի ազգաբնակութեան թիւը ստանում է 27,864,000 հոգի, որից ուղիղ կէսը — նորից ենթադրաբար — նա հաշւում է այլազգիներին, «տաճիկ» ընդհանուր անուան տակ, իսկ մնացած կէսը՝ 13,932,000 հոգի հայերին: Հայերի թուից հանելով ուղիղ կէսը — կանանց, երեխաներին եւ ծերունիներին, որոնք հարկ չեն վճարում — հարկ վճարող տղամարդկանց թիւը հաշւում է 5,224,500 հոգի, իսկ նրանց վճարած տարեկան հարկը 10,449,000 ոսկի1), իւրաքանչիւր հոգի 2 ոսկի հաշուելով: Ճիշդ նոյնքան էլ հաշւում է — նորից ենթադրաբար — անուղղակի հարկերը՝ մաքս, բաժ, հաս եւն., եւ դուրս է գալիս, որ հայ ժողովուրդը, հարկի անուան տակ, իր տէրերին ամէն տարի վճարում է 20,898,000 ոսկի, չհաշուած, ի հարկէ, կաշառքները, նուէրները, կողոպուտը2) եւն.:

Եթէ այդ գումարի մի փոքրիկ մասը, թէկուզ մէկ տասներորդը, զոհաբերի հայ ժողովուրդը իր ազատագրութեան գործի համար, ամէն ինչ վերջացած է եւ Հայաստանի փրկութիւնն ապահովուած — ենթադրում է մեր հեղինակը:

Բայց ի՞նչպէս պիտի լինի Հայաստանի ազատագրութեան գործի կազմակերպութիւնը եւ ո՞վ պիտի լինի նրա նախաձեռնողն ու կազմակերպիչը — դժբախտաբար, այս մասին ոչինչ չի ասում Շահամիրեանը: Սակայն, իր նամակներից մենք իմանում ենք — ինչպէս նաեւ կարելի է ենթադրել նրա ակնածական վերաբերմունքից եւ «Որ. Փառաց»ի ճակատին բազմած վրաց Հերակլի անունից — որ նա, որպէս այդ գործի ղեկավար եւ Հայաստանի փրկիչ, ի նկատի ունի Հերակլ Բ-ին: Վերջնիս նա համարում է Բագրատունեաց չառաւիղը եւ ուրեմն նաեւ օրինական ժառանգը Հայաստանի:

---

1) «Որ. Փառաց»ի վերջաբանից իմանում ենք, որ մէկ ոսկին հաւասար է հնդկական 4 ռուփիի, իսկ մէկ ռուփին ռուսական 50 կոպ. եւ պարսկական 2 դրանից մի քիչ աւելի է:

2) Լէս՝ «Հայկ. Տպագր.» Բ.